հետ՝ ինչ որ՝ հարկաւորն է, և մեծայոյս և լիայոյս եմ, թէ խորհրդակցութեամբ ընդ գործակալ Խորէն Աւագ քահանայի և պարոն Ատենադպրի՝ գործը կատարեալ կարգադրութեան մէջ կը հաստատէք, որպէս զի Աստուծով կարողանանք գարնանը, Քրիստոսի Յարութեան Զատկի օրերումն, մեր Բագու եկած միջոցին՝ ամեն բան վերջացնել միմեանց խորհրդակցութեամբ, և կանոնները հաստատել տալով Վեհափառ Կաթողիկոսին՝ սեպտ. 1888 ուսումնական տարուայ սկզբից՝ բանալ վանական դպրոցն և շարունակել ուսումն։

,, Կանոններն խմբագրած են յանուն ընկերութեան՝ ըստ սովորութեան, իսկ երբ դուք ապահովէք դայն դպրոցն, յայնժամ կանոնները ըստ այնմ կը պատրաստուին։

,, Մնացածն մեր պ. Ատենադպիրը կը խօսէ Ձեզ հետ և կ'լսէ Ձեզանից»։

ՄԵՍՐՈՊ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՍՄԲԱՏԵԱՆ

Յունվարի վերջերումն (1888) վերադառնալով Բագուից մեր պ. Ատենադպիրը բերեց և յանձնեց ինձ պարոն Պ. Բուդաղեան եղբարց ի 25 յունվարի գրած ու վաւերացրած խոստմնագիրը՝ որով խոստանան նուիրել յօգուտ և ի պահպանութիւն վանական դպրոցին Սաղիանի վանից տասն հազար ռուբլի դրամ ի յիշատակ եղբօր և հօր իւրեանց Թադէոս Աւագ քահանայի, որպէս զի այն անձեռնմխելի դրամագլխոյ տոկոսեօքն պահպանուի վանական դպրոցն, և ահա խոստմնագրի օրինակն։

,, Նորին գերապատուութեան

,, Վիճակաւոր Առաջնորդի թեմին Զամախուոյ

Սրբազան ՄԵՍՐՈՊ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ

,, ի Բագուայ քաղաքի Մովսէս, Եղիայէ, Ենոքէ,

,, Սմբատայ եւ Երուանդէ Բուդաղեանց

ԽՆԴԻՐ

Կամելով յաւերժացնել մեր հանգուցեալ եղբօր և հօր Թադէոս Ա. քահանայի յիշատակը՝ ցանկանում ենք հիմնել Սաղիանի Սուրբ Ստեփաննոսի վանքում վանական երկդասեան